

ՊԱՐՍԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Պարսկաստանը թէն հարիւրաւոր դարերի կեանք ունի, բայց քաղաքակրթութեան տեսակէտից նա գեռ շատ է յետ մնացել: Լուսաւորութեան և քաղաքակրթութեան դոզդոջուն ճառագայթները նոր են սկսել մուաք դործել իրանի երկրում. այդ լաւ նկատուում է դպրոցական գործի հետ ծանօթանալուց:

Բայց նախ քան երոպական տիպի պարսկական ուսումնարանների մասին տեղեկութիւններ տալս՝ կանգ առնենք սովորական տիպի դպրոցների վրայ, որովհետև անհամար է դրանց թիւը Պարսկաստանում, և նրանց միջնոլորդի մէջ է անուում, մեծանուում և պատրաստուում Պարսկաստանի գրեթէ ամբողջ մատաղ սերունդը, նրանք են մուաւոր, բարոյական կերպարանք տալիս ժողովրդին:

Պարսկաստանի ամեն մի քաղաքում, ամեն մի գիւղում շատ կան այդպիսի դպրոցներ, իսկ թեհրանում, թաւրիզում դրանց թիւը հասնում է աւելի քան հարիւրի թաւրիզում համարեա ամեն մի քայլափոխում մարդ պատահում է պարսից մադրասաների: Այդ մադրասաները լինում են մէջիդներին կից մութ և ցածր սենեակներում, որի մի անկիւնում անհրաժեշտ ֆալախկան է դրուած: Այդ մադրասաները յիշեցնում են մեր խալիֆայական ուսումնարանները: Աշակերտները խառն ի խուռն նստուած են ճիպոտով զինուած ուսուցիչ-մոլլայի շուրջը, մադրասայի զանազան մասերում, ոմանք խսիրների վրայ, մի քանիսը կապերտների վրայ, հարուստ երեխաներն էլ իրանց տներից բերած խալիչաների վրայ, ինչպէս և մոլլան:

Նրանք ծնկների վրայ դրած ունեն դասագրքերը և անդադար գլուխները խոնարհում, բարձրացնում, տանում-բերում,

ցած ու բարձր անում, իւրաքանչիւրը իրան համար լսելի ձայնով կարդում, մոմոռում է, և այդպիսով բարձրանում է մի ընդհանուր վշշոց:

Ամեն մի մագրասայում առնուազը կայ 40—100 աշակերտ, միամսութիւն կը լինէր մեթոդ, սիստեմ սպասել այդ դպրոցներում: Մագրասայում սովորեցնում են կրօնական գրքերի վրայ լոկ ընթերցանութիւն:

Գանք այժմ երոպական տիպի կրթական հիմնարկութիւններին: Սցովիսի հիմնարկութիւնների առաջին փորձերը եղել են եօթանասնական թւականներին: Սյոյ ժամանակներում Նասրէդգին-շահի ջանքերով և նրա կարգադրութեամբ թէ Թեհրանում, մի քիչ ուշ թէ Թաւրիզում հիմնում են երոպական կարգ ու կանոնով տէրունական դպրոցներ: Սյոյ թւականին Թաւրիզումն էր թագաժառանդ-վալիխաթ՝ Մուզաֆէր-Եղդիմը, այժմեան շահը, և ի պատիւ նրան Թաւրիզի տէրունական դպրոցը կոչում են «Մուզաֆէրիէ»: իսկ Թեհրանում մէկը միւսի ետերց բացում են մի քանի դպրոց, որոնցից ամենայատնին էր Դարուլ-Ֆնուն (գիտութիւնների տուն): Սյոյ դպրոցում չը կար նեղ կրօնական ոգին: Սյոյ դպրոցներում աւանդում են ֆիզիկա, ալգեբրա, աշխարհագրութիւն, պատմութիւն, թւարանութիւն, ֆրանսերէն և այլն:

Բացի ներքին փոփոխութիւնից՝ այդ դպրոցները տարբեր էին սովորական մագրասաններից նաև իրանց արտաքին կողմերով. աշակերտներն ունեին իրանց յատուկ դպրոցական համազգեստը, դպրոցական շնութիւնները փոքրիշատէ համեմատ էին առողջապահութեան պահանջներին, կային նստարաններ, ջոկ-ջոկ դասարաններ, մի խօսքով չը կար սովորական մագրասայի և ոչ մի նմուշ: Աւոյ դպրոցների դասատունները կամ երոպացիններ էին և կամ եւրոպայում կրթուած պարսիկ երթատարդներ:

Սյոյ դպրոցները, մանաւանդ «Դարուլ-Ֆնուն», աւելի զինուորական դպրոցի բնաւորութիւն էին կրում. այդ դպրոցներից դուրս եկածները գլխաւորապէս ստանձնել են արքունական պաշտօններ:

Թաւրիզի «Մուզաֆէրիէ» մուարլէմիսանան (այդպէս են կոչում նոր, կանոնաւոր դպրոցները) գոյութիւն ունեցաւ մօտ 15 տարի: 1896-97 թւականներին շատ խան վիճակ էր ախրում. Պարսկաստանի մէջ, մի կողմէց Նասրէդգին շահի սպանութիւնը, միւս կողմից թագաժառանդ Մուզաֆէրէդդիմի թաւրիզից հեռանալը մատնում է «Մուզաֆէրիէ» մուարլէմիսանան անուշագրութեան. գործը սկսում է կաղել. չը կար վալիաթի նման մի ուժեղ ձեռք և գործին նուիրուած մէկը, ուստի հէնց

նոյն թւականից դասարանները հետզիտէ պակասում են, և դրաբ-
րոցը վերջիվերջոց փակւում է...

Դպրոցի փակումով նրա սերմանած գաղափարները չեն
մեռնում. «Մուզաֆէրիէն» այդքան տարիների ընթացքում ստեղ-
ծել էր և տուել մի քանի ընթացաւարտ սերունդներ. մի պար-
սիկ միրզա պատմում է, որ Թաւրիզի այժմեան գլխաւոր պաշ-
տօնեաների, փոքրիշատէ աչքի ընկնող գրագէտ անձնաւորու-
թիւների յայտնի մասը կազմում են այդ դպրոցի ընթացաւարտ-
ները:

Իսկ թեհրանի «Դարուլ-Ֆնուն» մուարլէմիսանան լինելով
նիւթապէս միանգամայն ապահով և Մուզաֆէրէդզին-շահի ան-
միջական հովանաւորութեան տակ՝ աւելի ու աւելի գարզանում
է, բարենորոգւում և ստանում է երոպականաձև դպրոց։ Տարէց-
տարի աւելանում է նման տիպի մուարլէմիսանաների թիւը
թեհրանում և այժմ համում է 20-ի, Սրժէ յիշատակել գրանցից
«Շարաֆ», «Իֆթիրախէ», «Բուշտիեա», և «Սադաթ»։

Ուրեմն թեհրանում սկսած գործը կանոնաւոր շարունակ-
ւում էր և այժմ էլ շարունակւում է, իսկ Թաւրիզի «Մուզաֆէ-
րիէն» թէն փակուեց, բայց ապրում էր գաղափարը, եւ իսկա-
պէս. «Մուզաֆէրիէն» մուարլէմիսանայի փակուելուց գեռ մի եր-
կու տարի չանցած՝ այդ դպրոցի մի քանի ընթացաւարտ պար-
սիկ երիտասարդներ հաւաքւում, խորհում և ծրագրում են այդ-
պիսի մուարլէմիսանա բանալ Թաւրիզում և իսկոյն ձեռնար-
կում են գործը։ Այդ լուրը անմիջապէս համում է մոլլաների
ականջը։ Երանք սկսում են եռանդուն կերպով պրոպագանդա-
անել հակառակ այդ ձեռնարկութեան, կանչում են հրապարակ-
ներում, մէշիդներում, գոգոռում մոլիբունդ ամբոխին, սպառնա-
լիքներ կարդում, եւ խափանուում է այդ մի քանի երիտասարդ-
ների ձեռնարկութիւնը. նրանք խոհեմութիւն են համարում յետ
կանգնել իրանց մաաղրութիւնից, վախենալով ամբոխի յարձա-
կումներից և կղերի սպառնալիքներից։

Բայց յամենացն դէպս էի բոլորովին չէ մեռնում գաղափա-
րը. ներկայ թագաժառանգի Լողմանը—քժիշկը հիմնում է նոյն
ծրագրով մի դպրոց, որ իր անունով և կոչւում է «Լողմանեան»։
Այդ դպրոցը ազատ չէր՝ ինարկէ՝ խուժանի և կղերի յարձակում-
ներից և սպառնալիքներից. բայց նա ապրեց, իր գոյութիւնը
շարունակեց այդ որոշ չափով նորհի վալիաթի, որը մի
յայտնի չափով հովանաւորում է «Լողմանեան» դպրոցին։ Դրա-
նից յետոյ հետզիտէ տարէցատարի բացւում են «Քեամալ», «Իղալ
և «Բասիրիաթ» մուարլէմիսանաները։ Այնպէս որ այժմ Թաւրի-
զում կան չորս դպրոցներ, որոնք այսպէս թէ այնպէս կրում

են երոպական դպրոցների ընաւորութիւն, իսկ դրանցից ամենականնաւորները ն ուշադրութեան արժանիները առաջին երկուսն են, այսինքն «Լողմանեան» և «Քեամալ» դպրոցները:

«Քեամալ» (իմաստութիւն) դպրոցը ունի 6 բաժանմունք, երեք պատրաստական բաժանմունքներ և երեք հիմնական դասարաններ, մօտ 100 աշակերտաներով: Ես վերջերս այցելեցի այդ դպրոցը, և, պէտք է ասել, տպաւորութիւնը շատ միխթարական և բաւարար էր: Անտեղ կայ կարգ և կանոն, դասարանները բաժան-բաժան, չնորհքով նստարաններ, աշակերտաները մատ են բարձրացնում՝ դաս պատասխանելու համար, կունալով կարգաւոր միանգամայն վերացած, դասատոնները պատրաստուած, որոց կրթութիւն առած անձնաւորութիւններ, բաւարար դասընթաց և այլն: Մի խօսքով՝ «Քեամալ» մուարլէմիսանան թողնում է կանոնաւոր դպրոցի տպաւորութիւն:

«Քեամալ» դպրոցում անզնում են աշխարհագրութիւն, թւաբանութիւն, փոքր ինչ պատմութիւնից, ուսւսերէն, ֆրանսերէն, արաբերէն և պարսկերէն: Ուսւսերէն և ֆրանսերէն լեզուների դասատոնները հայեր են. իսկ դպրոցի տեսուչը և անօրէնը «Մուղափէրիէ» մուարլէմիսանայի ընթացաւարտներից է, մի ազատ մտածող պարսիկ *): Իմ հարցին, թէ ինչու այսպիսի դպրոցների թիւը արագ չ աճում, նա պատասխանեց, որ ժողովուրդը շատ է տգէտ, նա անկարող է գեռ և գնահատել և հասկանալ մուարլէմիսանաների առաւելութիւնները:

Զը մոռանամ աւելացնել այս դպրոցի վերաբերմամբ, որ բարձր դասարանի աշակերտները պարագում են ստորին դասարանների հետ:

Իսկ գալով միւս դպրոցներին, պէտք է ասեմ, որ «Լողման» և «Քեամալիաթ»ը համեմատաբար աւելի անկանոն վիճակի մէջ են, մանաւանդ վերջնը, որը մօտ 7 ամիս է՝ ինչ հիմնուել է և գտնուում է գեռ անկերպարան դրութեան մէջ. իսկ «Լողմանեան» մուարլէմիսանան աւելի կանոնաւոր է, աւելի լաւ և հաստատուն հիմքերի վրայ է դրուած, քան «Քեամալ», և աւելի հին է: Սյս դպրոցն էլ ունի մօտաւորապէս 100 աշակերտ:

Ես մոռացայ «Լողմանեան» դպրոցի վերաբերմամբ և այն, որ նա ունի և իր փոքրիշատէ կանոնաւոր դրատուն-ընթերցարանը, ունի դեղատուն՝ բացուած յատկապէս աշակերտների

*) «Քեամալ» դպրոցի տեսուչը հրատարակում է նաև թերթ՝ էլի «Քեամալ» անունով, այդ մասին երկար տեղեկութիւն կարելի է գտնել մեր «Պարսկաստանի մամուլ» յօդուածում. «Մուրճ», 1901 թ. № 7.

համար և գտնուում է լողմանի հսկողութեան տակ: Դպրոցը արտաքին յարձակումներից պաշտպանելու համար նշանակուած են պահապան դինուորներ, որոնք հսկում են:

Ահա թաւրիզում եղած այն դպրոցները, որոնք փոքրիշատէ կրում են երոպական դպրոցների բնաւորութիւն:

Պարսկաստանի ուրիշ քաղաքներում համարեա թէ չը կան մուարլէմինանաներ, միայն վերջին մի երկու տարբիններում սկսել են Ռաշտում նման դպրոցներ բանալու փորձեր անել:

Անտարակոյս դպրոցները անկարող են միանդամից յեղաշրջել պարսիկների կեանքը, մի գօրեղ և լայն հոսանք առաջցնել. բայց յամենայն դէպս այն էլ պարզ է, որ պարսիկների կրթական գործը այդ մուարլէմինաներով մտնում է մի նոր ֆազիսի մէջ և կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ: Աւելի գործ կատարելու և առաջադիմելու համար պահանջւում են երկրի հիմնական վերանորոգութիւններ...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ